

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արմավիրի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ հետևյալ 3 թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

1.Կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիրը՝ 63-3.2-10)

Բաժնի պետի հանձնարարությամբ մեթոդական և մասնագիտական օգնություն է ցույց տալիս Մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններին, իր կողմից սպասարկվող տարածքում մասնակցում է ուսուցիչների վերապատրաստման, որակավորման և վերաորակավորման դասընթացների կազմակերպմանն ու իրականացմանը, ապահովում է առարկայական օլիմպիադայի տարածքային, մարզային և հանրապետական փուլերին տարածքի դպրոցականների մասնակցությունը, ինչպես նաև իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է.

*/0300/ կրթություն կամ /0200/ հումանիտար-սոցիալական մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն

*քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2015 թվականի հունվարի մեկը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

*տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

*ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն/

*տիրապետում է անհրաժեշտ /պարտադիր/ կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառնություններից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների /Ցանկեր N 1-2/:

Մրցույթը կկայանա 11.10.2012 թ. ժամը 11.00-ին, Մարզպետարանի շենքում /ք. Արմավիր, Աբովյան 71/:

2. Անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետ /ծածկագիրը՝ 63-3.3-4/

Իրականացնում է Մարզպետի կողմից ստորագրված որոշումների, կարգադրությունների և Աշխատակազմի ղեկավարի կողմից ստորագրված հրամանների հաշվառման, դրանց բնօրինակների պահպանության և առաքման հանձնելու աշխատանքները: Իրականացնում է Մարզպետի և Աշխատակազմի ղեկավարի կողմից նշանակվող անձանց, ինչպես նաև Աշխատակազմում քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող անձանց անձնական գործերի հաշվառման, հանձնման-ընդունման, պահպանման աշխատանքները: Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում Աշխատակազմի քաղաքացիական ծառայողների գրանցամատյանային տվյալների հավաքագրման և դրանք Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդ ներկայացնելու աշխատանքներին: Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատակազմի առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաև Աշխատակազմի առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման նախապատրաստական աշխատանքներին, ինչպես նաև իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

*ունի բարձրագույն կրթություն

*քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական, հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

*սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իրենց լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

*համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

*անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1-2):

Մրցույթը կկայանա 17.10.2012 թ. ժամը 11.00-ին, Մարզպետարանի շենքում /ք. Արմավիր, Աբովյան 71/:

3. Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիրը՝ 63-3.3-6)

Բաժնի պետի հանձնարարությամբ ստուգում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխա որդեգրելու համար դիմած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից ներկայացված փաստաթղթերի ճշտությունը, իրականացնում է բժշկական մասնագիտական աշխատանք, խնամակալության և հոգաբարձության մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա լրացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց տարածքային հաշվառման մատյանները և ձևավորում է տվյալ մարզի տարածքում բնակվող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տվյալների տարածքային շտեմարան և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց տվյալների տարածքային շտեմարան, իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է.

*առողջապահություն մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն

*սույն պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իրենց լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

*համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

*անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1-2):

*քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

Մրցույթը կկայանա 11.10.2012 թ. ժամը 14.00-ին, Մարզպետարանի շենքում /ք. Արմավիր, Աբովյան 71/:

Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարանի աշխատակազմ (ք. Արմավիր, Աբովյան 71) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

*դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ծևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)

*տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի(վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

*արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

*մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի,

*անձնագիր և անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցութային մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

ՀՀ քաղաքացիները մրցութային ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 27.09.2012 թ.:

Մրցութային մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Մարզպետարանի աշխատակազմ (ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ. 0237 2-42-62):

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցութային մասնակցելու համար ՀՀ քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: